

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) N 7 հավելվածի 1-ին կետի 13-րդ ենթակետի համաձայն արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակ է համարվում անշարժ գույքի առուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեությունը:

Օրենքի N 7 հավելվածի 2-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն անշարժ գույքի առուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեություն է համարվում անշարժ գույքի առուվաճառքի և (կամ) վարձակալության հանձնման միջնորդական գործունեությունը:

Օրենքի N 8 հավելվածի 13-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ արտոնագրային վճարի հաշվարկման համար հիմք ընդունվող ելակետային տվյալներն են՝ անշարժ գույքի առուվաճառքի կամ վարձակալության միջնորդային գործունեության համար՝ աշխատողների թիվը:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 6-րդ կետով պաշտոնապես պարզաբանում են.

Անհատ ձեռնարկատիրոջ կողմից ինքնուրույնաբար (առանց այլ աշխատողների) անշարժ գույքի առուվաճառքի և (կամ) վարձակալության հանձնման միջնորդական գործունեություն իրականացնելու դեպքում արտոնագրային վճարի հաշվարկման համար ելակետային տվյալը որոշելիս անհատ ձեռնարկատերը համարվում է մեկ աշխատող:

Համաձայնեցված է
ՀՀ ֆինանսների նախարարության հետ
Դ. Սարգսյան
16 նոյեմբերի 2013 թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան
6 նոյեմբերի 2013 թ.
N 8